ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2011 թվականի նոյեմբերի 15-ին

ՄԱՐԴՈՒ ԱՐՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԻ ԴՈՆՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽՆԵՐԱՐԿՈՒՄԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է «մարդու» արյան և դրա բաղադրամասերի շրջանառության, դոնորության և ցուցաբերվող փոխներարկումային բժշկական օգնության որակի և անվտանգության հետ կապված հարաբերությունները:

2. Սույն օրենքով սահմանվում են՝

1) «մարդու» արյան և դրա բաղադրամասերի դոնորության կազմակերպման հիմնական սկզբունքները.

2) «մարդու» արյան և դրա բաղադրամասերի փոխներարկումային բժշկական օգնության կազմակերպման հիմնական սկզբունքները.

3) դոնորների, ռեցիպիենտների, բժշկական կազմակերպությունների և ոլորտի այլ կազմակերպությունների իրավունքները և պարտականությունները.

4) «մարդու» արյան կամ դրա բաղադրամասերի որակի և անվտանգության ապահովման հիմնական սկզբունքները:

3. Օրենքով կարող են սահմանվել զինված ուժերում «մարդու» արյան և դրա բաղադրամասերի շրջանառության, դոնորության և ցուցաբերվող փոխներարկումային բժշկական օգնության հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորման առանձնահատկությունները:

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **արյան բաղադրամաս՝** ֆիզիկական մեթոդներով արյունից անջատված ցանկացած բաղադրամաս.

~~2) **արյան դոնոր՝** 18 տարին լրացած, արյունատվության հակացուցում չունեցող անձ, որը կամովին հանձնում է արյուն կամ արյան բաղադրամասեր.~~

«2) արյան դոնոր՝ 18 տարին լրացած, արյունատվության հակացուցում չունեցող, անհատույց, կամավոր հիմունքներով կամ բժշկական կազմակերպության կողմից արյունատվությունից առաջ և հետո դոնորին օրգանիզմի կենսաբանական և էներգետիկ կարողությունների վերականգնման, ճանապարհածախսի հատուցման նպատակով դրամական փոխհատուցմամբ արյուն կամ դրա բաղադրամասեր կամովին հանձնող անձ,

~~3) **արյան և արյան բաղադրամասերի դոնորություն՝** դոնորի կողմից կատարվող արյան կամ արյան բաղադրամասերի հանձնում.~~

«3) մարդու արյան և արյան բաղադրամասերի դոնորություն (այսուհետ՝ դոնորություն)՝ արյան և դրա բաղադրամասերի շրջանառության բնագավառում իրականացվող գործընթաց,

որը ներառում է դոնորների ընտրություն, դոնորական արյան հավաքագրում, հետազոտում, դոնորական արյան բաղադրամասերի ստացում, պահպանում, տեղափոխում և տրամադրում այլ կազմակերպություններին.»,

~~4) **դոնորության գործընթաց՝** արյան, արյան բաղադրամասերի և արյան պատրաստուկների պահանջարկն ապահովելու նպատակով դոնորության քարոզչություն, դոնորների ընտրություն, դոնորական արյան հավաքում, հետազոտում, դոնորական արյան բաղադրամասերի ստացում, պահպանում, տեղափոխում և տրամադրում այլ կազմակերպությունների.~~

~~5) **արյան դոնորության և փոխներարկումային բժշկական օգնություն իրականացնող կազմակերպությունների համակարգ՝** բժշկական և ոչ բժշկական կազմակերպությունների ցանց, որոնք ընդգրկված են մարդու արյան և արյան բաղադրամասերի դոնորության և փոխներարկման բժշկական օգնության և սպասարկման գործընթացում.~~

«**5) արյան ազգային ծառայություն՝** բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող և ոչ բժշկական կազմակերպությունների ցանց՝ անկախ կազմակերպական-իրավական ձևից, որոնք ընդգրկված են մարդու արյան և արյան բաղադրամասերի դոնորության և փոխներարկման բժշկական օգնության և սպասարկման, արյան պատրաստուկների արտադրության գործընթացում.»,

6) **փոխներարկումային բժշկական օգնություն՝** արյան և դրա բաղադրամասերի շրջանառության բնագավառում բժշկական մասնագիտական գործունեության տեսակ, որը ներառում է դոնորական արյան բաղադրամասերի պահպանումը և դոնորական արյան բաղադրամասերի «ընտրությունը և» փոխներարկումը.

7) **արյան պատրաստուկներ՝** պլազմայից ստացված կենսաբանական նյութեր.

8) **արյան ռեցիպիենտ՝** բուժական նպատակով արյան բաղադրամասեր ստացող անձ.

9) **դոնորի իմունացում՝** օտար հակածնի ներարկում դոնորին՝ հատուկ ախտորոշիչ կամ բուժական հատկություններով օժտված արյան բաղադրամասերի ստացման նպատակով.

10) **արյան ռեեստր՝** արյան դոնորության, փոխներարկումային բժշկական օգնության և արյան բաղադրամասերի պաշարների, փոխներարկումային բարդությունների «վերաբերյալ էլեկտրոնային» տեղեկատվական համակարգ.

11) **փոխներարկումային բարդություններ՝** ցանկացած բարդություն, որն առաջանում է ռեցիպիենտի մոտ՝ կապված արյան բաղադրամասերի փոխներարկման հետ.

12) **լիազոր մարմին՝** առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմին.

13) **դոնորի տեղեկացված համաձայնություն՝** բուժանձնակազմի կողմից դոնորին հասկանալի լեզվով արյուն կամ արյան բաղադրամաս վերցնելու նպատակի և գործընթացի, դրա հետևանքով օրգանիզմում տեղի ունեցող կենսաբանական փոփոխությունների, անվտանգության միջոցառումների, հնարավոր ռիսկերի, իրավունքների և պարտականությունների մասին տեղեկատվություն տրամադրվելու դեպքում դոնորության վերաբերյալ կամավոր համաձայնություն.

14) **ռեցիպիենտի տեղեկացված համաձայնություն՝** ռեցիպիենտին արյան բաղադրամասեր փոխներարկելու նպատակի և գործընթացի, դրա հետևանքով օրգանիզմում տեղի ունեցող կենսաբանական փոփոխությունների, անվտանգության միջոցառումների, հնարավոր ռիսկերի մասին բուժանձնակազմի կողմից ռեցիպիենտին հասկանալի լեզվով տեղեկատվություն տրամադրելու դեպքում ռեցիպիենտի կամավոր համաձայնություն:

«**15) արյան պետական պաշար՝** արյան բաղադրամասերի, ինչպես նաև արյան հավաքագրման, հետազոտման, պահպանման և տեղափոխման համար անհրաժեշտ սարքավորումների, պարագաների և նյութերի մշտապես պահպանվող և թարմացվող նվազագույն ծավալ»:

Հոդված 3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին

1. Արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է միջազգային պայմանագրերից, սույն օրենքից, սույն օրենքից բխող իրավական ակտերից և իրավական այլ ակտերից:

~~2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության կարգավորման այլ նորմեր, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերով սահմանված նորմերը:~~

«2. Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և սույն օրենքի նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:»:

Հոդված 4. Արյան և դրա բաղադրամասերի շրջանառության ոլորտում բժշկական մասնագիտական գործունեության տեսակները

1. Արյան և դրա բաղադրամասերի շրջանառության բնագավառում բժշկական մասնագիտական գործունեության տեսակներն են՝

1) արյան և դրա բաղադրամասերի դոնորության կազմակերպումը.

ա. դոնորների ընտրությունը և բժշկական հետազոտումը,

բ. դոնորական արյան կամ դրա բաղադրամասերի հավաքումը,

գ. դոնորական արյան կամ դրա բաղադրամասերի հետազոտումը,

դ. արյան բաղադրամասերի պատրաստումը,

ե. արյան բաղադրամասերի պահպանումը,

զ. արյան բաղադրամասերի երկարատև պահպանումը,

է. արյան բաղադրամասերի տեղափոխումը և տրամադրումը այլ ստորաբաժանումներին կամ կազմակերպություններին՝ փոխներարկման կամ արյան պատրաստուկների արտադրման նպատակով.

2) փոխներարկումային բժշկական օգնությունը.

ա. դոնորական արյան բաղադրամասերի պահպանումը,

բ. դոնորական արյան բաղադրամասերի ընտրությունը և փոխներարկումը:

2. Արյան և դրա բաղադրամասերի դոնորության կազմակերպման և փոխներարկումային բժշկական օգնության տեսակների շրջանակներում իրականացվող գործառույթները սահմանվում են սույն օրենքով «, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով» և լիազոր մարմնի հրամանով:

Գ Լ Ո Ւ Խ 2

ՄԱՐԴՈՒ ԱՐՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԻ ԴՈՆՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽՆԵՐԱՐԿՈՒՄԱՅԻՆ ~~ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ~~ «ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ» ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 6. Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությունները

1. Արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորություններն են՝

1) արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության ոլորտում պետական քաղաքականության իրականացումը.

2) արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության ազգային ծրագրի (այսուհետ՝ արյան ազգային ծրագիր) հաստատումը.

3) արյան և դրա բաղադրամասերի արտահանման և ներմուծման կարգի հաստատումը.

4) արյան ռեեստրի գործունեության, տեղեկությունների գրանցման, օգտագործման և տրամադրման կարգի հաստատումը.

~~5) արյան և դրա բաղադրամասերի տեղափոխման, արյան բաղադրամասերի պատրաստման կարգի հաստատումը.~~

~~6) փոխներարկումային բժշկական օգնության իրականացման կարգի հաստատումը.~~

~~7) արյան, դրա բաղադրամասերի որակի, անվտանգության և փոխներարկումային բժշկական օգնության նկատմամբ որակի ապահովման հսկման ներքին ընթացակարգի հաստատումը.~~

~~8) արյան բաղադրամասերի պետական պաշարների պահպանման կարգի հաստատումը:~~

«8) արյան բաղադրամասերի պետական պաշարների ստեղծման, պահպանման և նորացման կարգի հաստատումը:»:

Հոդված 7. Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության բնագավառում լիազոր մարմնի լիազորությունները

1. Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության բնագավառում լիազոր մարմնի լիազորություններն են՝

1) արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության ոլորտում պետական քաղաքականության մշակումը և իրականացումը.

2) արյան ազգային ծրագրի մշակումը և ներկայացումը կառավարության հաստատմանը.

3) օրենքով սահմանված կարգով արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության անվտանգության և որակի ապահովման պետական վերահսկողությունը.

4) փոխներարկման համար անհրաժեշտ քանակության արյան և դրա բաղադրամասերի պլանավորումը, ապահովումը, ներառյալ՝ արտակարգ իրավիճակներում.

5) դոնորի կողմից արյուն կամ արյան բաղադրամաս հանձնելու հաճախականության հաստատումը.

6) դոնորության համար հակացուցումների ցանկի հաստատումը.

7) դոնորի իմունացման կարգի հաստատումը.

8) դոնորին տրվող տեղեկատվական թերթիկի, համաձայնության և դոնորի առողջության վերաբերյալ հայտարարագրի ձևերի հաստատումը.

9) դոնորի բժշկական հետազոտությունների ցանկի և հետազոտությունների իրականացման կարգի հաստատումը.

10) արյան և դրա բաղադրամասերի, արյան նմուշի հետազոտության ցանկի և հետազոտությունների կարգի հաստատումը.

~~11) փոխներարկվող արյան բաղադրամասերի համատեղելիության որոշման կարգի հաստատումը.~~

«11) փոխներարկվող արյան կամ արյան բաղադրամասերի և ռեցիպիենտի արյան համատեղելիության որոշման հետազոտության իրականացման կարգի հաստատումը.»,

12) արյան և դրա բաղադրամասերի շրջանառության ոլորտում բժշկական փաստաթղթերի ձևերի ու դրանց լրացման կարգերի հաստատումը.

13) արյան և դրա բաղադրամասերի պաշարների հավաքման և պահպանման կարգի հաստատումը.

14) արյան ռեեստրի վարումը:

«15) արյան և դրա բաղադրամասերի տեղափոխման, արյան բաղադրամասերի պատրաստման կարգի հաստատումը.

16) փոխներարկումային բժշկական օգնության իրականացման կարգի հաստատումը.

17) արյան, դրա բաղադրամասերի որակի, անվտանգության և փոխներարկումային բժշկական օգնության նկատմամբ որակի ապահովման հսկման ներքին ընթացակարգի հաստատումը.

18) արյունատվությունից առաջ և հետո դոնորին սննդի և ճանապարհածախսի հատուցման տրամադրման կարգի հաստատումը:»:

Հոդված 11. Արյան ռեեստրի վարումը

1. Արյան ռեեստրի գործունեության, տեղեկությունների գրանցման և օգտագործման կարգը հաստատում է կառավարությունը:

~~2. Արյան ռեեստրում դոնորների վերաբերյալ գրանցված տեղեկությունները համարվում են բժշկական գաղտնիք և կարող են տրամադրվել արյան դոնորությամբ և փոխներարկմամբ զբաղվող լիցենզավորված բժշկական կազմակերպություններին սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում և կարգով:~~

2.«Արյան ռեեստրում դոնորների վերաբերյալ գրանցված տեղեկությունները համարվում են բժշկական գաղտնիք և առանց դոնորի համաձայնության կարող են տրամադրվել արյան դոնորությամբ և փոխներարկմամբ զբաղվող լիցենզավորված բժշկական կազմակերպություններին՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով:»,

3. Արյան ռեեստրում գրանցված դոնորների մոտ շրջապատի համար վտանգավոր հիվանդություն կամ վարակակրություն հայտնաբերելու դեպքում այդ մասին տեղեկացվում է ~~Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչությունը~~ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը»՝ հակահամաճարակային միջոցառումներ իրականացնելու համար:

4. Արյան ռեեստրում գրանցված բժշկական գաղտնիք համարվող տեղեկությունները կարող են այլ անձանց տրամադրվել օրենքով նախատեսված դեպքերում:

Հոդված 19. Արյան հետազոտությունը

1. Արյան կամ դրա բաղադրամասերի հավաքման դեպքում արյունը պարտադիր կարգով հետազոտվում է՝ արյան կամ դրա բաղադրամասերի անվտանգությունն ապահովելու նպատակով:

2. Լիազոր մարմինը հաստատում է արյան «և դրա բաղադրամասերի» պարտադիր հետազոտությունների ցանկը, իրականացման կարգն ու մեթոդները:

Հոդված 20. Արյան բաղադրամասերի պատրաստումը

1. Արյան դոնորի արյունից ֆիզիկական մեթոդներով կարող են անջատվել բաղադրամասեր՝ ~~կառավարության~~ «լիազոր մարմնի» սահմանած կարգով:

Հոդված 22. Արյան կամ դրա բաղադրամասերի տեղափոխումը

1. Արյան կամ դրա բաղադրամասերի տեղափոխումն իրականացվում է՝ ապահովելով վերջիններիս որակական և անվտանգության ցուցանիշների անփոփոխությունը:
2. Արյան կամ դրա բաղադրամասերի տեղափոխումն իրականացվում է հատուկ սարքավորումների և (կամ) տրանսպորտի միջոցով՝ ապահովելով սառցային շղթան:
3. Արյան կամ դրա բաղադրամասերի տեղափոխումն իրականացվում է ~~կառավարության~~ «լիազոր մարմնի» սահմանած կարգով:

Հոդված 23. Դոնորական արյան պատրաստուկների արտադրությունը և շրջանառությունը

1. Արյան պատրաստուկների արտադրությունն իրականացնում են լիցենզավորված կազմակերպությունները՝ օրենքով սահմանված կարգով:
2. Արյան պատրաստուկների արտադրությամբ զբաղվող կազմակերպությունները ~~կառավարության սահմանած կարգով~~ որպես հումք օգտագործում են արյան բաղադրամասերը, որոնք ստացվում են դոնորական արյունից և (կամ) ընկերքից:
««2.1. Ընկերքից արյունը ստացվում է և դրանից արյան բաղադրամասերն անջատվում են լիազոր մարմնի կողմից սահմանված կարգին համապատասխան:»:
3. Արյան պատրաստուկների արտադրության գործընթացը և շրջանառությունը կարգավորվում են «Դեղերի մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով:

Հոդված 25. Դոնորի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը

1. Դոնորն իրավունք ունի՝
1) մինչև արյունատվությունը լիարժեք տեղեկատվություն ստանալու արյունատվության գործընթացի, ~~դոնացիայի~~ «դոնորության» հետ կապված հնարավոր բարդությունների, դոնորական արյան հետազոտման կարգի, դոնորի իրավունքների, պարտականությունների և դոնորին տրամադրվող արտոնությունների վերաբերյալ.
2) տեղեկատվություն ստանալու բժշկական և լաբորատոր հետազոտությունների արդյունքների մասին.
3) ստանալու արյունատվության ընթացքում պատճառված առողջական վնասի դիմաց փոխհատուցում՝ օրենքով սահմանված կարգով.
4) արյունատվությունից ինքնաբացարկ, ինչպես նաև արյունատվությունից հետո արյունը կամ արյան բաղադրամասերը օգտագործման համար ոչ պիտանի հայտարարելու՝ առանց պատճառների պարզաբանման.
5) պահանջելու իր արյունատվության վերաբերյալ գաղտնիության ապահովում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:
2. Դոնորը պարտավոր է հայտնել նախկինում իր կրած կամ տվյալ պահին առկա հիվանդությունների և վարքագծային գործոնների վերաբերյալ (ծխախոտ, ալկոհոլ օգտագործելը և դրա հաճախականությունը, թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածություն և դրա հաճախականությունը) պահանջվող տեղեկությունները:
3. Դոնորը օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր առողջական վիճակի և վարքի վերաբերյալ տեղեկությունները դիտավորությամբ թաքցնելու կամ աղավաղելու համար, եթե դրա հետևանքով պատճառվել կամ կարող էր պատճառվել վնաս ռեցիպիենտի առողջությանը:

Հոդված 26. Դոնորին տրվող արտոնությունները

~~1. Դոնորի բժշկական հետազոտումը արյունատվությունից առաջ իրականացվում է անվճար և նրան տրվում է արյունատվությունը հաստատող համապատասխան փաստաթուղթ, որի ձևը հաստատում է լիազոր մարմինը:~~

«1. Դոնորի բժշկական հետազոտումը արյունատվությունից առաջ իրականացվում է անվճար: Արյունատվությունից հետո պահանջի դեպքում նրան տրվում է արյունատվությունը հաստատող համապատասխան փաստաթուղթ, որի ձևը հաստատում է լիազոր մարմինը:»,

:»

~~2. Արյունատվությունից հետո կենսաբանական և էներգետիկ կարողությունների վերականգնման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով դոնորին տրամադրվում է սնունդ:~~

«2. Կենսաբանական և էներգետիկ կարողությունների վերականգնման նպատակով լիազոր մարմնի սահմանած կարգով արյան դոնորներին արյունատվությունից առաջ և հետո պարտադիր տրամադրվում է սնունդ, իսկ փոխհատուցվող արյան դոնորներին համապատասխանաբար նաև դրամական փոխհատուցում:»:

3. Օրենքով կարող են սահմանվել դոնորին տրվող այլ արտոնություններ:

Հոդված 27. Արյան բաղադրամասերի փոխներարկման հիմնական սկզբունքները

1. Արյան բաղադրամասերի փոխներարկումն իրականացվում է միայն բուժական նպատակներով:

2. Արյան փոխներարկումային բժշկական օգնությունը կարող է կիրառվել ~~հիվանդի~~ «ռեցիպիենտի» առողջության վերականգնման և (կամ) կյանքի փրկության նպատակով:

3. Արյան փոխներարկումային բժշկական օգնությունն իրականացնում է բժիշկը կամ միջին բուժաշխատողը՝ բժշկի հսկողության ներքո:

4. Արյան բաղադրամասերի փոխներարկումն իրականացվում է՝ ~~կանխարգելելով~~ «նվազեցնելով»փոխներարկումային բարդությունների առաջացումը:

5. Փոխներարկումը թույլատրվում է միայն ռեցիպիենտի տեղեկացված համաձայնությամբ:

6. Արյան բաղադրամասերի փոխներարկումն առանց ռեցիպիենտի տեղեկացված համաձայնության թույլատրվում է, եթե ռեցիպիենտի կյանքը վտանգված է, և

1) նրա ֆիզիկական կամ հոգեկան վիճակը թույլ չի տալիս տրամադրել տեղեկացված համաձայնություն.

2) փոխներարկումային բժշկական օգնության համար համաձայնությունը հնարավոր չէ ստանալ նրա օրինական ներկայացուցչից:

7. Ռեցիպիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի տեղեկացված համաձայնության բացակայության դեպքում, եթե բժշկական միջամտությունը հետաձգման ենթակա չէ, փոխներարկումային բժշկական օգնության վերաբերյալ որոշումը, ելնելով ~~հիվանդի~~ «ռեցիպիենտի» շահերից, կայացվում է բժշկական խորհրդակցության (կոնսիլիումի), իսկ դրա անհնարինության դեպքում՝ բժշկի կողմից՝ համապատասխան գրառում կատարելով բժշկական փաստաթղթերում:

Հոդված 28. Արյան բաղադրամասերի փոխներարկումային բժշկական օգնության

իրականացումը

~~1. Արյան բաղադրամասերի փոխներարկումային բժշկական օգնության իրականացման անհրաժեշտության դեպքում ռեցիպիենտը առողջության պահպանման նպատակով անցնում է բժշկական հետազոտություն և փոխներարկվող արյան բաղադրամասերի համատեղելիության որոշման հետազոտում, որն իրականացնում է (են) բժիշկը (բժիշկները)՝ լիազոր մարմնի հաստատած կարգով:~~

«1. Փոխներարկումային փոխազդեցությունների և բարդությունների նվազեցման նպատակով փոխներարկումից առաջ կատարվում է փոխներարկվող արյան բաղադրամասի և ռեցիպիենտի արյան համատեղելիության որոշման հետազոտություն՝ լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով:»,

2. Փոխներարկումային բժշկական օգնության նպատակով մարդուն ներարկվում են դոնորական արյունից ստացված արյան բաղադրամասեր:

3. Արգելվում է մարդուն փոխներարկել սահմանված կարգով չստուգված կամ ժամկետանց կամ անվտանգության պայմաններին չհամապատասխանող արյան բաղադրամասեր:

4. Փոխներարկումային բժշկական օգնության իրականացման կարգը սահմանում է ~~կառավարությունը:~~ «լիազոր մարմնի»:

5. Փոխներարկումային բժշկական օգնության իրականացման ընթացքում բժշկական փաստաթղթերում կատարվում է համապատասխան գրառում:

6. Յուրաքանչյուր փոխներարկումային բժշկական օգնության հետևանքով առաջացած բարդության վերաբերյալ բժշկական փաստաթղթերում կատարվում է համապատասխան գրառում, և գրավոր հաղորդագրություն է ներկայացվում արյան ռեեստր:

Հոդված 30. Արյան կամ դրա բաղադրամասերի արտահանումը

1. Արյան կամ դրա բաղադրամասերի արտահանումը Հայաստանի Հանրապետությունից թույլատրվում է՝

1) Հայաստանի Հանրապետության կարիքների համար արյան պատրաստուկների ստացման կամ պատրաստուկների հետ փոխանակման նպատակով.

2) բացառիկ դեպքերում Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող ռեցիպիենտին փոխներարկելու նպատակով.

3) արտակարգ իրավիճակներում մարդասիրական օգնություն ցուցաբերելու նպատակով, ինչպես նաև լիազոր մարմնի հավանությանն արժանացած միջազգային համագործակցության ծրագրերի շրջանակներում:

«4) անձի ախտորոշումը ճշտելու նպատակով»:

2. Արյան կամ դրա բաղադրամասերի արտահանումը կարող է թույլատրվել միայն Հայաստանի Հանրապետության կարիքների համար արյան բավարար քանակի առկայության դեպքում:

3. Հայաստանի Հանրապետությունից արյան կամ դրա բաղադրամասերի արտահանման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

~~Հոդված 32. Մարդու արյան դոնորություն և փոխներարկումային բժշկական օգնություն իրականացնող կազմակերպությունների համակարգը~~

~~1. Հայաստանի Հանրապետության արյան դոնորություն և փոխներարկումային բժշկական օգնություն իրականացնող կազմակերպությունների համակարգը ներառում է՝~~

~~1) արյան ազգային կենտրոնը.~~

~~2) արյան դոնորություն իրականացնող կազմակերպությունները.~~
~~3) փոխներարկումային բժշկական օգնություն իրականացնող կազմակերպությունները.~~
~~4) արյան պատրաստուկների արտադրությամբ զբաղվող կազմակերպությունները:~~

«*Հոդված 32.* Արյան ազգային ծառայությունը
1. Արյան ազգային ծառայությունը ներառում է՝
1) արյան դոնորություն իրականացնող կազմակերպությունները.
2) փոխներարկումային բժշկական օգնություն իրականացնող կազմակերպությունները.
3) արյան պատրաստուկների արտադրությամբ զբաղվող կազմակերպությունները:»:
2. Արյան ազգային ծառայության մեջ ընդգրկված կազմակերպությունները իրականացնում են՝
1) արյան պետական պաշարների ստեղծում, պահպանում և նորացում՝ բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում կնքված պայմանագրերի հիման վրա,
2) արյան ռեեստրում տվյալների մուտքագրում՝ էլեկտրոնային եղանակով:
3. Արյան ազգային ծառայության մեջ ընդգրկված կազմակերպություններում անհատույց, կամավոր հիմունքներով դոնորության հիման վրա հավաքագրված արյան բաղադրամասերը ներառվում են բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում կնքված պայմանագրերի հիման վրա ստեղծվող արյան պետական պաշարների մեջ: Սույն դրույթը չի տարածվում որևէ կոնկրետ ռեցիպիենտի համար մեկ այլ անձի կողմից իրականացվող անհատույց, կամավոր հիմունքներով դոնորության դեպքերի վրա:»

~~Հոդված 33.~~ ~~Արյան ազգային կենտրոնի իրավասությունը մարդու արյան և արյան բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության բնագավառում~~

~~1. Արյան ազգային կենտրոնը իրավաբանական անձ է, որի գործունեության հիմնական ուղղություններն են՝~~
~~1) մասնակցությունը արյան ազգային ծրագրի իրականացմանը.~~
~~2) մասնակցությունը մարդու արյան կամ դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության քաղաքականության նախագծի մշակմանը, քաղաքականության ներդրմանը և դիտարկմանը.~~
~~3) կառավարության սահմանած կարգով պետական պաշարների պահպանումը.~~
~~4) արյան ազգային ծառայությունում ընդգրկված կազմակերպություններին կազմակերպամեթոդական օգնության ցուցաբերումը, մասնագիտական խորհրդատվության իրականացումը.~~
~~5) լիազոր մարմնի հանձնարարությամբ արյան դոնորական և փոխներարկումային ծառայությունների բնագավառում մասնագիտական դիտարկումների իրականացումը.~~
~~6) արյան բաղադրամասերի տարեկան պաշարների պլանավորումը և դրա ներկայացումը լիազոր մարմին՝ հաստատման.~~
~~7) անհատույց կամավոր դոնորության քարոզչության միջոցառումների տարեկան ցանկի մշակումը, ներկայացումը լիազոր մարմին՝ հաստատման և մասնակցություն դրա իրականացմանը.~~
~~8) լիազոր մարմնի հանձնարարությամբ արյան ռեեստրի վարումը.~~
~~9) օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը:~~

Հոդված 34. Արյան դոնորություն իրականացնող կազմակերպությունները

1. Արյան դոնորություն իրականացնող կազմակերպությունները օրենքով սահմանված կարգով լիցենզավորված բժշկական ~~կազմակերպություն կամ դրա ստորաբաժանումներ~~ «կազմակերպություններն» են, որոնք իրականացնում են հետևյալ գործառույթները կամ դրանց մի մասը՝

1) դոնորական արյան բաղադրամասերի պահպանում և փոխներարկման նախապատրաստում.

2) դոնորական արյան բաղադրամասերի տրամադրում բժշկական կազմակերպության այլ ստորաբաժանումներին՝ օգտագործման համար.

~~3) ոչ պիտանի արյան բաղադրամասերի խոտանում.~~

4) արյան և դրա բաղադրամասերի դոնորության վերաբերյալ բժշկական փաստաթղթերի վարում.

5) դոնորական արյան և դրա բաղադրամասերի տեղափոխում.

6) դոնորական արյան և դրա բաղադրամասերի պաշարների ստեղծում, հետազոտում և պահպանում.

7) դոնորական արյան և դրա բաղադրամասերի տրամադրում այլ ծառայությունների և կազմակերպությունների՝ փոխներարկման, պաշարների ստեղծման կամ արյան պատրաստուկների արտադրման նպատակով.

8) դոնորական արյան հավաքման և օգտագործման բոլոր փուլերի ընթացքում որակի և անվտանգության ապահովում.

9) խորհրդատվության տրամադրում հիվանդանոցային փոխներարկումային ծառայությանը.

10) լիազոր մարմնի սահմանած կարգի համաձայն՝ տվյալների հավաքում և տրամադրում արյան ռեեստրին.

11) ոչ պիտանի արյան և դրա բաղադրամասերի խոտանում:

Հոդված 35. Փոխներարկումային բժշկական օգնություն իրականացնող կազմակերպությունները

1. Փոխներարկումային բժշկական օգնություն իրականացնող կազմակերպությունները լիցենզավորված բժշկական ~~կազմակերպություն կամ դրա ստորաբաժանումներ~~ «կազմակերպություններն» են, որոնք իրականացնում են հետևյալ ծառայությունները կամ դրանց մի մասը՝

1) դոնորական արյան բաղադրամասերի պահպանում և փոխներարկման նախապատրաստում.

2) դոնորական արյան բաղադրամասերի տրամադրում բժշկական կազմակերպության այլ ստորաբաժանումներին՝ օգտագործման համար.

3) ոչ պիտանի արյան բաղադրամասերի տրամադրում արյան դոնորություն իրականացնող կազմակերպություններին ~~կամ դրանց ստորաբաժանումներին~~՝ խոտանման նպատակով.

4) փոխներարկումային բժշկական օգնության վերաբերյալ բժշկական փաստաթղթերի վարում.

5) արյան բաղադրամասերի պաշարների, փոխներարկման և փոխներարկման ընթացքում առաջացած կողմնակի երևույթների և բարդությունների վերաբերյալ, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված այլ տեղեկատվության հավաքում և տրամադրում արյան ռեեստրին:

Հոդված 36. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների պարտականությունները արյան պաշարների և փոխներարկումային բժշկական օգնության ապահովման ոլորտում

1. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունները լիցենզավորման կարգերով նախատեսված դեպքերում պարտավոր են ունենալ փոխներարկումային բժշկական օգնություն իրականացնելու կարողություններ և արյան անհրաժեշտ նվազագույն պաշար:

~~2. Այն բժշկական կազմակերպությունները, որոնք չունեն լիազոր մարմնի հաստատած պահանջներին համապատասխանող արյան վարակային անվտանգության հետազոտություն անցկացնելու պայմաններ, հետազոտության նպատակով դոնորական արյան փորձանմուշների հետազոտումը պայմանագրային հիմունքներով կազմակերպում են այլ բժշկական կազմակերպություններում:~~

««2. Այն բժշկական կազմակերպությունները, որոնք չունեն արյան փորձանմուշների հետազոտություն իրականացնելու համար Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրված բժշկական օգնության և սպասարկման իրականացման համապատասխան լիցենզիա, հետազոտության նպատակով դոնորական արյան փորձանմուշների հետազոտումը պայմանագրային հիմունքներով կազմակերպում են բժշկական օգնության և սպասարկման համապատասխան լիցենզիա ունեցող այլ բժշկական կազմակերպություններում:»,

3. Արյան դոնորություն իրականացնող կազմակերպությունները կամ դրանց ստորաբաժանումները, փոխներարկումային բժշկական օգնություն իրականացնող բժշկական կազմակերպությունները կամ դրանց ստորաբաժանումները իրենց մոտ առկա արյան բաղադրամասերը, ըստ անհրաժեշտության, ~~կառավարության~~«լիազոր մարմնի» սահմանած կարգով տրամադրում են այլ բժշկական կազմակերպությունների:

Գ Լ Ո Ւ Խ 8

ԱՐՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԻ ՈՐԱԿԻ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽՆԵՐԱՐԿՈՒՄԱՅԻՆ ~~ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ~~ «ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ» ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 40. Արյան և դրա բաղադրամասերի որակի, անվտանգության և փոխներարկումային բժշկական օգնության նկատմամբ որակի ապահովման հսկման ներքին ընթացակարգը

1. Արյան և դրա բաղադրամասերի որակի, անվտանգության և փոխներարկումային բժշկական օգնության նկատմամբ որակի ապահովման հսկման ներքին ընթացակարգը իրականացնում է արյան դոնորության կամ փոխներարկմամբ զբաղվող կազմակերպությունը՝ ~~կառավարության~~ «լիազոր մարմնի» սահմանած կարգով: